ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ԲԱԽՇՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Բախշյան.

Ի պատասխան Ձեր՝ 19.02.2018թ. հ.Ե-3/126 գրության՝ Ռաֆֆու և Անդրանիկի փողոցների հարակից հրապարակից դեպի «Վագաս» օբյեկտի դիմաց ընկած հատվածում իրականացվող կրպակների շինարարության կապակցությամբ, տեղեկացվում է.

Ձեր կողմից բարձրացված հարցերն ուսումնասիրվել են և արդյունքում պարզվել է.

1. Քննարկվող հողամասերը ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի հ.1517-Ն որոշմամբ փոխանցվել են Երևան համայնքին և համարվում են համայնքային սեփականություն:

2. Վերոնշյալ որոշմամբ Երևան համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել է 11330.61 հա հողամաս և քանի որ բոլոր միավորներն առանձնացված և գրանցված չեն, ապա նպատակահարմար կամ անհրաժեշտ չի եղել դրանք ներառել ամենամյա գույքագրման փաստաթղթերում: Երևան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման ցանկում ընդգրկվել են տարբեր գործարքների արդյունքում սահմանված կարգով Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված և իրավունքի պետական գրանցում ստացած հողամասերը:

Գրության 3-րդ և 4-րդ հարցերի վերաբերյալ տեղեկացվում է, որ քննարկվող հողամասերն ընդգրկված են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հետևաբար, դրանք չեն մասնավորեցվել և սահմանված կարգով տրամադրվել են կառուցապատման իրավունքով: ՀՀ հողային օրենսգրքի 48[6] հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով՝ նույն օրենսգրքի 76-80-րդ հոդվածներով սահմանված կարգով: Համայնքային սեփականություն հանդիսացող քննարկվող հողամասերի կառուցապատման իրավունքով տրամադրման մրցույթի հաղթողներ են ճանաչվել՝ Արշակ Ամիրյանը, Էդմոնդ Օհանյանը, Անդրանիկ Առաքելյանը, Ֆարադ Արզումանյանը, Վահե Մախշկյանը, Տիգրան Սահակյանը, Լիան Ալեքսանյանը, Հայկ Գրիգորյանը, Լևոն Հարությունյանը, Ժանետա Նիկոնյանը, Խաչատուր Երեմյանը և մրցույթի արդյունքները սահմանված կարգով հաստատվել են Երևանի քաղաքապետի 25.03.2016թ. հ.1095-Ա, 13.08.2015թ. հ.2503-Ա, 03.05.2017թ. հ. 1382-Ա, և 20.06.2016թ. հ.2260-Ա որոշումներով:

5-րդ հարցադրման կապակցությամբ տեղեկացվում է, որ Ռաֆֆու փողոց հ.հ. 77/4, 77/6, 77/7, Անդրանիկի փողոց հ.հ.75/16, 79/4, 79/6 հասցեներում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար տրամադրվել են՝

11.10.2017թ. հ.01/18-Մ-7950-971, հ.01/18-Մ-7949-973,

16.05.2016թ. հ.01/18-Ա-3228-420,

11.09.2015թ. հ.01/18-Օ-364-768,

21.08.2017թ. հ.01/18-Ա-5908-743 շինարարության թույլտվությունները:

6-րդ հարցի վերաբերյալ տեղեկացվում է, որ քննարկվող հողամասերը գտնվում են Անդրանիկի փողոց հ.79/6, հ.79/4, 75/16, Ռաֆֆու փողոց հ.հ.77/4, 77/5, 77/6, 77/7, 77/8, 77/9, 77/10, 77/11 հասցեներում:

7-րդ հարցի կապակցությամբ տեղեկացվում է, որ վերը նշված սուբյեկտները չեն հանդիսանում հողի հարկ և գույքահարկ վճարողներ, քանի որ հողամասերը տրամադրվել են կառուցապատման իրավունքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ